Կոմիտաս

Մարգարիտ Բաբայանին (1907, Բեռլին)

Ձեր նամակն ինձ շատ ուրախացրեց: Շուշիկն իր «Բանգին ու հէքիարին» կստանայ այստեղից, իսկ «Շորորը»՝ այնտեղից...

Երկրորդ և աւելի կարեւորն է այս: Հայ եղանակները, ինչպէս նոցա ոգին պահանջում է, ներդաշնակելը որքան պարզ է, նոյնքան աւելի դժուար է, յետոյ, դեռ մենք՝ հայերս, պէտք է մեզ համար ոճ ստեղծենք ու ապա թէ յամարձակ առաջ գնանք: Ես դեռ ցարդ ստացել եմ ուրիշներից և այժմ նոր եմ սկսում (ըստ իմ հասկացողութեան և ճաշակի, նախապատրաստութեան ու պաշարի) հայ եղանակներին համաձայն ոճով դաշնակել: Ժամանակ է լինում, որ ես ընկղմած եմ կատարելապէս միայն հայ երաժշտութեան մէջ և ահա այն ժամանակ ես գրում եմ, ստեղծում եմ այնպիսի բան, ինչպիսին յարմար է մեր երաժշտութեան ոգուն. բայց լինում է և ժամանակ, որ, առանց իմ կամքի, ընկնում եմ մի այնպիսի երեւակայութեան շավղի վերայ, որ կամ հայկական չէ, կամ նորա կողքիցն է անցնում: Բայց և այնպէս, ես պիտի հասնեմ նպատակիս, նոյնիսկ, եթէ ամբողջ կեանքս իսկ վրայ դնեմ: Դորա համար շատ թանգ են իմ սրտակից բարեկամներիս իւրաքանչիւր, նոյնիսկ չնչին համարած կամ բծախնդիր նկատողութիւնները:

Սիրելի Մարգարիտ,

Ես կատարեալ չեմ, ինչպէս բոլոր մարդիկ, բայց կատարելութեան ձգտող, նոյնիսկ այն դէպքում, երբ ես մերժում եմ մէկի կարծիքը, թէև մերժում եմ առժամանակ, բայց այդ ինձ մտածել է տալիս, թէ ինչո՞ւ այս կամ այն կտորը

դուր չէ եկել մէկին կամ միւսին, և ես աշխատում եմ հարցը լուծել: Էլ տեղ չկայ: Շատ ու շատ սիրալիր բարևներ քեզ, Շուշիկին, Լուսիկին ու նորա մօրն ու հօրը, մայրիկին ու թոռնիկին, Արմենուհուն ու բժշկին: Ողջ լինէք բոլորդ էլ:

Շատ կուզէի իմանալ, թէ յատկապէս ո՞ր կտորները, ըստ Լուսիկի, անյաջող ու թոյլ կամ օտար են:

Ես կերթամ հոկտեմբերի 1-ին այստեղից:

Ձեր Կոմիտաս